01/10.1/3484-09
2009-06-02

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Գալուստ Սահակյանի, Գագիկ Մինասյանի, Սամվել Նիկոյանի, Մկրտիչ Մինասյանի, Արեգ Ղուկասյանի, Գագիկ Մելիքյանի, Արա Բաբլոյանի, Սուքիաս Ավետիսյանի, Ռաֆիկ Գրիգորյանի, Միշա Ստեփանյանի, Վարդան Բոստանջյանի և Մարտին Սարգսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ։

Օրենքով սահմանված չափանիշներին համապատասխանող կազմակերպություններում աուդիտի անցկացումը պայմանավորված է հանրային շահ ներկայացնող կազմակերպությունների (այդ թվում՝ նաև խոշոր կազմակերպությունների) ֆինանսական հաշվետվությունների հրապարակայնության և թափանցիկության, ինչպես նաև այդ հաշ-

վետվություններն օգտագործողներին տրամադրվող տեղեկատվության արժանահավատության ապահովման անհրաժեշտությամբ։ Այդ պահանջը նպաստում է նաև օտարերկրյա ներդրողների վստահության բարձրացմանը և ներդրումների ներգրավմանը։

Ինչ վերաբերում է նախագծի հիմնավորման մեջ նշված փաստարկներին, հայտնում ենք, որ որակյալ աուդիտը ենթադրում է հարկային ու հաշվապահական հաշվառման վարման, ակտիվների արդյունավետ կառավարման, կազմակերպության գործունեության շահութաբերության բարձրացման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը, որը մեծ ակտիվներ, սակայն փոքր հասույթ ունեցող ընկերությունների կառավարման մարմիններին հնարավորություն կտա ընդունելու նաև ճշգրիտ, կենսունակ և արդյունավետ կառավարչական որոշումներ։ Կարծում ենք, որ աուդիտորական ուսումնասիրության հաշվին ֆինանսական միջոցների պակասի լրացումը չի նպաստի կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացմանը։

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը նպատակահարմար չի համարում ներկայացված օրենքի նախագծի ընդունումը։

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Սուրեն Կարայանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-607-29.04.2009-ՖՎ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին

***Հոդված** 1.* Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-515-Ն «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետեւ՝ օրենք) 24-րդ հոդվածի 1.1 կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«1.1. Խոշոր կազմակերպությունը պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունները։

Սույն օրենքի իմաստով խոշոր կազմակերպություն է համարվում այն կազմակերպությունը, որի նախորդ տարվա գործունեությունից հասույթը գերազանցում է 500 միլիոն դրամը։»։

***Հոդված** 2.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Տնտեսական ճգնաժամի պայմաններում բազմաթիվ ձեռնարկությունների գործունեությունը հետզհետե դառնում է ոչ շահութաբեր, իսկ որոշներն էլ արդեն անգործության են մատնված։

Վերոնշյալ ձեռնարկությունների գործունեության ակտիվացման կամ վերսկսման առաջին խոչընդոտը ֆինանսական միջոցների պակասն է։ Այս պայմաններում, այդ ձեռնարկությունների կողմից, լրացուցիչ ֆինանսների տրամադրումը համապատասխան աուդիտորական ուսումնասիրություն անցկացնելու նպատակով, ավելի կնվազեցնի դրանց արդյունավետ գործունեության հնարավորությունը։

Օրենսդրական նախաձեռնությունը նպատակ ունի մեծ ակտիվներ, սակայն փոքր հասույթ ունեցող ձեռնարկություններին, ազատել աուդիտորական ուսումնասիրության իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ծախսերից, ինչը հնարավորություն կտա այդ ազատ ֆինանսական միջոցներն ուղղել տնտեսական գործունեության արդյունավետության բարձրացմանը։

Հեղինակներ՝ Գալուստ Սահակյան, Գագիկ Մինասյան, Սամվել Նիկոյան, Մկրտիչ Մինասյան, Արեգ Ղուկասյան, Գագիկ Մելիքյան, Արա Բաբլոյան, Սուքիաս Ավետիսյան, Ռաֆիկ Գրիգորյան, Միշա Ստեփանյան, Վարդան Բոստանջյան, Մարտին Սարգսյան